ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

Հայաստանի Հանրապետություն, 0010, ք. Երևան, Տիգրան Մեծի 4, հեռ.՝ (+374 60) 830 – 840, (+374 60) 830 850
Էլ-փոստ՝ info@competition.am, վեբ կայք՝ http://www.competition.am

«15» 09 2025 թ.
No 01/0351

«ԳԱ-ԵՐ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ ՎԼԱԴԻՄԻՐ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ
(Հասցե՝ Շիրակ, Գյումրի, Ղանդիլյան փ., 11ա, բն. 32,
պատճենը՝ Շիրակ, Գյումրի, Պ.Սևակ 10/1/1)

Հարգելի պարոն Ղազարյան,

Մրցակցության և սպառողների շահերի պաշտպանության հանձնաժողովը (այսուհետ՝ **Հանձնաժողով**) 2025 թվականի օգոստոսի 27-ին ստացել է հաղորդում (այսուհետ նաև՝ **Հաղորդում**) մի շարք տնտեսավարող սուբյեկտների կողմից «Sannuuy Girl», «Sumyu Girl», «Seeny Girl», «Sunlly Girl», «Sunny Gold», «Suny Green», «Sunnuy Girl», «Suniglll», «Sunuuy Girl» և նմանօրինակ գրառումներ պարունակող կանացի միջադիրների ներմուծման և իրացման վերաբերյալ, որի առնչությամբ Հանձնաժողովը քննարկում է վարույթ հարուցելու առիթները:

Հանձնաժողովի կողմից «Տնտեսական մրցակցության և սպառողների շահերի պաշտպանության մասին» օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված լիազորությունն իրականացնելու անհրաժեշտությամբ պայմանավորված և ղեկավարելով Օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասով՝ խնդրում ենք սույն գրությունը ստանալու օրվանից 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում Հանձնաժողով ներկայացնել «Գա-Եր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության վաճառասրահներում ցուցադրվող «Sannuuy Girl», «Sumyu Girl», «Seeny Girl», «Sunlly Girl», «Sunny Gold», «Suny Green», «Sunnuy Girl», «Suniglll», «Sunuuy Girl» և նմանօրինակ գրառումներ պարունակող կանացի միջադիրների լուսանկարները,

որոնցում հստակ տեսանելի կլինեն այդ արտադրանքների ապրանքային նշանները, արտադրող և ներմուծող ընկերությունների տվյալները:

Տեղեկացնում ենք նաև, որ.

1. «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ տարիներով, ամիսներով կամ օրերով հաշվարկվող ժամկետների ընթացքն սկսվում է այն օրացուցային տարվա, ամսվա, ամսաթվի կամ վրա հասած իրադարձությանը հաջորդ օրվանից, որով որոշված է դրա ժամկետի սկիզբը:

2. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ վարչական վարույթի իրականացման հետ կապված փաստաթղթերը կազմվում են, և ամբողջ գործավարությունն իրականացվում է հայերենով:

3. Օրենքի 43-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ տնտեսավարող սուբյեկտի հիմնավոր միջնորդության հիման վրա Հանձնաժողովի նախագահի գրությամբ կամ Հանձնաժողովի որոշմամբ սահմանված տեղեկատվության ներկայացման ժամկետը համապատասխանաբար կարող է Հանձնաժողովի նախագահի գրությամբ կամ Հանձնաժողովի որոշմամբ երկարաձգվել, և տեղեկատվությունը ենթակա է տրամադրման այդ ժամկետում:

4. Օրենքի 43-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովի կողմից փաստաթղթեր, նյութեր և այլ տեղեկատվություն պահանջելու իրավաչափությունը տնտեսավարող սուբյեկտը կարող է վիճարկել միայն այն չտրամադրվելու դեպքում՝ Հանձնաժողովի կողմից պատասխանատվության միջոց կիրառելու մասին որոշման վիճարկման շրջանակում:

5. Օրենքի 93-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովի նախագահի գրությամբ կամ Հանձնաժողովի որոշմամբ կամ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր կամ այլ տեղեկատվություն սահմանված ժամկետում չներկայացվելու կամ ոչ հավաստի, ոչ ամբողջական, ապակողմնորոշիչ տեղեկություններ ներկայացվելու կամ սեփական նախաձեռնությամբ Հանձնաժողով ոչ հավաստի, կեղծ, ապակողմնորոշիչ փաստաթղթեր կամ այլ տեղեկություններ ներկայացվելու համար նշանակվող տուգանքի չափը կազմում է մինչև հինգ միլիոն դրամ:

6. ՀՀ քրեական օրենսգրքի 479-րդ հոդվածով վարչական վարույթով ապացույց կամ բացատրություն կեղծելու, փոխելու, ոչնչացնելու կամ թաքցնելու կամ կեղծ ապացույց ներկայացնելու համար սահմանված է քրեական պատասխանատվություն:

7. ՀՀ քրեական օրենսգրքի 504-րդ հոդվածով վարչական վարույթով սուտ բացատրություն կամ սուտ ցուցմունք տալու համար սահմանված է քրեական պատասխանատվություն:

8. Հանձնաժողով փաստաթղթեր ներկայացնել և ստանալ, ինչպես նաև Հանձնաժողովի հետ հետագա ողջ հաղորդակցությունը կարող եք իրականացնել նաև առցանց՝ Հանձնաժողովի e-Compete էլեկտրոնային համակարգի (այսուհետ

նաև՝ Համակարգ) միջոցով, որի համար անհրաժեշտ է գրանցվել Համակարգում՝ մուտք գործելով Հանձնաժողովի պաշտոնական կայքի (www.competition.am) «Իմ էջը» բաժին, ընտրելով «Գրանցվել» հրամանը և լրացնելով անձի նույնականացման համար պահանջվող տվյալները:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ԳԵՂԱՄ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Կապարող՝ Հասմիկ Նորավյան
Մրցակցության վերահսկողության վարչություն
Հեռ. (+374 60) 830-840 (216)

www.competition.am կայքում հրապարակման օրը՝ 22 հոկտեմբերի 2025 թվական: